ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐՔԵՐԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ (XI—XV ԴԴ.)

Ք. Ս. ՏԵՐ-ԴԱՎԹՅԱՆ

Հայ միջնադարյան գրականության տարածված ժանրերից է վարքը, որը դեռևս քիչ է ուսումնասիրված և ըստ ամենայնի չի գնահատված, թեև նրա զարգացումը անջրպետված չէր համընդհանուր գրական շարժումից։

Վարքագրության մեջ իրենց յուրահատուկ արտացոլումն են գտել ժամանակի ոգու, աշխարհայացքի, գրական ճաշակի բնագավառում եղած փոփոխությունները։ Վարքերը աստիճանաբար հարստացել են կյանքի առաջադրած նորանոր մոտիվներով ու նրբերանգներով։ Վարքագրական հուշարձանները այն դեղարվեստական ստեղծագործություններն են, որոնց ընդերքում ընձյուղել են դեղարվեստական արձակի փոքր ծավալի ժանրերի, ինչպես, օրինակ, նովելի, պատմվածքի սաղմերը։ Սակայն այս բնագավառի հետազոտության բացը դեռևս նկատելի է հայ գրականության պատմության մեջ։ Վարքագրական հուշարձանները գիտվել են իբրև պատմական սկզբնաղբյուր, հրապարակվել և ուսումնասիրվել են որպես այդպիսիք։ Այդ առումով հայագիտության մեջ հրսկայական աշխատանք է կատարվել։ Վարքերի, վկայաբանությունների հավաքումը, հրատարակումը, նրանց աղբյուրագիտական և պատմական արժեքի վերհանումը սկսվել է դեռևս XIX դ. սկզբում, հետզհետե հարստանալով նորանոր ուսումնասիրություններով։ Այդ գործում հատկապես մեծ վաստակ ունեն վենետիկյան Մխիթարյանները (Մ. Ավգերյան, Ղ. Ալիշան և մյուսներ)։ Սակայն վարքերի գրական-գեղարվեստական արժանիքները անտեսվել են։ Նույն վիճակն էր տիրում լատինական, բյուզանդական և ռուսական սրբախոսական գրականության ուսումնասիրության ասպարեզում[1]*։ Դարասկզբին միայն հրապարակվեցին հետազոտություններ, որոնցում վարքերը դիտվում էին իբրև գրական առանձին ժանր։ Վերջին տարիներին ռուս մասնագետները լույս ընծայեցին մի շարք արժեքավոր ուսումնասիրություններ՝ նվիրված ինչպես սլավոնական, այնպես էլ բյուզանդական ու լատինական գրականություններին*[2]*։*

---

[1] Н. Н. Голенищев-Кутузов. Средневековая латинская литература Италии. М., 1972. стр. 210.

[2] *Վ. Գ. Ադրիանովա-Պերետցի հոդվածաշարը* ТОДРЛ-*ի* (Труды Отдела древнерусской литературы Института литературы) 1947, 1949, 1951, 1953 *թթ. համարներում։* И. П. Еремин. Литература древней Руси. М.—Л., 1966; Д. С. Лихачев. Человек в литературе древней Руси, М., 1970. *նույնի,* «Культура Руси времени Андрея Рублева и Епифания Премудрого», М.—Л., 1962; *նույնի,* «Поэтика древнерусской литературы», Л., 1971, «Памятники византийской литературы IV—IX вв.», т. I, М., 1968. т. II (IX—XIV вв.), М., 1969; «Памятники латинской литературы IV—IX вв.», М., 1970, «Истоки русской беллетристики», Л., 1970; И. Н. Голенищев-Кутузов. Средневековая латинская литература Италии, М., 1972; С. В. Полякова. Византийские легенды. Л., 1972; Л. А. Дмитриев. Житийные повести Русского Севера как памятник литературы XIII—XVII вв., Л., 1973; С. С. Аверинцев. Плутарх и античная биография, М., 1973; «Византийская литература», М., 1974 *և այլն։*

Հայ իրականության մեջ այդ ուղղությամբ սոսկ առաջին քայլերն են արված։ Աբեղյանն իր «Հայոց հին դրականության պատմության» մեջ գրականագիտորեն արժևքավորեց վարքագրական հուշարձանները և գեղարվեստական վերլուծության ենթարկեց V դ. ամենաարժեքավոր երկերը, ինչպես նաև Վահան Գոգթնացու վկայաբանությունը (VIII դ.)։ Վարքագրական ժանրի գեղարվեստական ուսումնասիրության առումով հաջորդ քայլը հանդիսացավ Մ. Ավդալբեգյանի մենագրությունը[3]։

Բայց եթե կարելի է նշել հայկական վարքագրության առաջին՝ դասական շրջանի առավել կամ պակաս չափով լուսաբանված լինելու փաստը, ապա նույնը չի կարելի ասել մնացած փուլերի մասին, որոնց քննությունը սահմանափակվել է կամ սոսկ որոշ վարքերի հրատարակությամբ, կամ էլ պատմագրական և աղբյուրագիտական բնույթի հարակից հետազոտություններ պարունակող հրապարակումներով։

Հայ գրականության մեջ մոտավորապես XI դ. սկիզբ է առնում զարգացման մի նոր շրջան, որը նոր որակ է հաղորդում նաև վարքերին։ Վարքագրական հուշարձանների բնույթի և նկարագրի վրա որոշակի ներգործություն են ունենում մի կողմից՝ վարքագրական ժանրի զարգացման ներքին օրինաչափությունները, մյուս կողմից՝ գրական ընդհանուր վերելքը[4], որը համակել էր նաև հոգևորական խավին և իր վառ արտահայտությունը գտել «արծաթե դարի» գրական գործիչների կամ «երկրորդ թարգմանիչների» ստեղծագործության մեջ[5]։ Գնահատելով վերջիններիս գործունեությունը, Ղ. Ալիշանը ընդգծում է նրանց բացառիկ վաստակը հայ դրականության և լեզվի հետագա զարգացման գործում, լեզու, որն իր մաքրությամբ և նրբագեղությամբ մոտենում է դասական շրջանի լեզվին[6]։

Վաղ քրիստոնեական գրական հուշարձանների թարգմանությունները[7] և վարքագրական ժանրի հետագա արմատավորումն ու մշակումը «արծաթե դարի» գործիչների կողմից հզոր ազդակ են դառնում վարքերի զարգացման համար։ Այդ շրջանի հուշարձանների բարձր արվեստը մեծապես պայմանավորված էր հետևյալ հանգամանքով. վարքեր ու վկայաբանություններ ստեղծելուն ձեռնամուխ են լինում ո՛չ միայն սոսկ ուսուցողական նպատակների հետամուտ վարքագիր հեղինակները, այլև ճանաչված գրողներն ու գրական գործիչները։ Նրանցից էին Գրիգոր Վկայասերը (XI—XII դդ. սկիզբ), Գրիգոր IV, Փոքր Վկայասեր մականունով (XII դ.), Ներսես Շնորհալին (XII դ.), Ներսես Լամբրոնացին (XII դ.), Մխիթար Գոշը (XII—XIII դդ.), Դավիթ Ալավկաորդին (XII դ.), Գրիգոր Սկևռացին (XIII դ.), Վարդան Արևելցին (XIII դ.), Մխիթար Այրիվանեցին (XIII դ.), Կիրակոս Գանձակեցին (XIII դ.), Գրիգոր Անավարզեցին (XIII դ.) և ուրիշներ։

Այդ ժամանակաշրջանի վարքագրական հուշարձաններն աչքի են ընկնում գեղարվեստական ձևի ու ոճի բազմազանությամբ ու հարստությամբ։ Հանդի-

3 Մ. Թ. Ավդալբեգյան, Հայ գեղարվեստական արձակի սկզբնավորումը, Երևան, 1971։

4 Մ. Աբեղյան, Երկեր, հ. IV, Երևան, 1970, էջ 17—69։

5 Ղ. Ալիշան, Շնորհալի և պարագայ իր, Վենետիկ, 1873։

6 Նույն տեղում, էջ 62։

7 Գ. Զարբհանալեան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (Դ—ԺԳ դդ.), Վենետիկ, 1889, էջ 28—31։

պում են ներբողական կամ հռետորական բնույթի (արձակ և չափածո), հիշատակարանատիպ, հայսմավուրքային, ինչպես նաև սովորական կենսագրություններ հիշեցնող վարքեր։ Այս կամ այն գործին նվիրված վարքագրական երկերի սոսկ թվարկումն իսկ վկայում է XI—XV դդ. գրական աշխարհում հիշյալ ժանրի տարածվածության մասին[8]։ Վարքերի ծավալմանը նպաստում է նաև եկեղեցական-դավանաբանական վեճերի այն աշխուժացումը, ապա նաև բորբոքումը, որը XII դ. կեսերից արդեն սկսում է բավական նշանակալից դեր կատարել հայ ժողովրդի քաղաքական կյանքում[9]։

Գրականության ընդհանուր վերելքը դրսևորվում էր ո՛չ միայն հռետորական վարքերի ծավալման և նրանց արվեստի մեջ, այլև թեմաների ընտրության, բովանդակության, աշխարհայացքի, աշխարհականացման տարրերում։

Հայրենասիրությունը, որ XI դ. հայ գեղարվեստական գրականության գլխավոր թեմաներից էր[10], թափանցում է և վարքագրական երկերի մեջ, որոնց մի նշանակալի մասի թեմատիկ առանցքն է դառնում անցյալի մշակութային և եկեղեցական-քաղաքական գործիչների կյանքը։ Վարքագիրները դիմում են հայոց պատմության էջերին, ցանկանալով քաջալերել իրենց ժամանակակիցներին։ Այսպես, Հովհաննես Սարկավագի (մահացել է 1129 թ.) ստեղծագործության մեջ բավական մեծ տեղ են գրավում ներբողները։ Նրա մասին Կիրակոս Գանձակեցին (XIII դ.) վկայում է. «Սա գրեաց ճառս ներբողականս ի մեծազօր արքայն Հայոց Տրդատ, և ի սուրբ հայրապետն Ներսէս, և ի սքանչելին Սահակ և Մեսրոպ. արար և շարական Ղևոնդեացն քաղցր եղանակաւ և յարմար բանիւ»[11]։ Ներսես Շնորհալու, Ներսես Լամբրոնացու, Վարդան Արևելցու և ուրիշների գրական ժառանգության մեջ որոշակի տեղ են գրավում Գրիգոր Լուսավորչին, նրա թոռներին և հետնորդներին, Սահակ Պարթևին ու Մեսրոպ Մաշտոցին նվիրված վարքերն ու հատկապես ներբողական ճառերը։

XI դ. երկրորդ կեսից փոփոխություններ են նկատվում և միջնադարյան մարդու աշխարհայացքում, որոշակի արժեք է ստանում ինքը՝ մարդը։ Մեղքե-

---

8 Այսպես, Ներսես Շնորհալուն նվիրված են Ներսես Լամբրոնացու չափածո ներբողը (Ներսես Շնորհալի, Ողբ Եդեսիոյ, Կալկաթա, 1872, էջ 167—216) և երկու վարք՝ ընդարձակ («Սոփերք», հ. XIV, Վենետիկ, 1854, էջ 8—87) և համառոտ, որը վկայակոչում է Ղ. Ալիշանը («Շնորհալի և պարագայ իւր», էջ 42)։ Ներսես Լամբրոնացուն նվիրված են երկու ներբող, մեկը՝ Գրիգոր Սկևռացունը («Սոփերք», հ. XV, էջ 1—90), երկրորդը անանուն՝ նույնպես ժամանակակցի (Ալիշան, Հայապատում, հ. II, Վենետիկ, 1901, էջ 419), մեկ վարք, որի հեղինակն է Սամվել Սկեռացին (Գ. Հովսեփյան, Հիշատակարանք ձեռագրաց, Անթիլիաս, 1951, էջ 542—550)։ Ներսես Լամբրոնացու վարքը հրատարակվել է մի քանի անգամ (նույն տեղում, էջ 550—551, ծանոթ.)։ Գևորգ Սկևռացուն նվիրված են՝ ներբող («Հայապատում», էջ 504—507) և վարք («Բանբեր Մատենադարանի», № 7, Երևան, 1964, էջ 410—433)։

9 Եկեղեցական-քաղաքական պայքարի սրման և վարքագրության զարգացման նման պայմանավորվածություն է մատնանշում Խ. Լոպարեը բյուզանդական վարքագրության մեջ. «Սրբերի վարքերը, որպես պատմական աղբյուր,— գրում է նա,— սերտորեն կապված են տվյալ դարաշրջանի եկեղեցական-քաղաքական հոսանքների հետ, նյութ հանդիսանալով դրա մանրակերկիտ ուսումնասիրության համար։ Որքան ավելի լարված էր դարաշրջանի մթնոլորտը, որքան ավելի գործուն էր եկեղեցին արձագանքում կյանքի երևույթներին, այնքան ավելի շատ սրբերի վարքեր էին հայտնվում և այնքան ավելի շատ վարքեր էին պատմական բնույթ կրում» (Х. Лопарев, Греческие жития святых VIII—IX веков. Петроград, 1914, стр. 43):

10 Մ. Արեղյան, Երկեր, հ. IV, էջ 70—72։

11 Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 113։

րի բավության և աշխարհիկ վայելքներից հրաժարվելու, ապաշխարանքի, այն աշխարհում հոգու փրկության համար մարմինը ձաղկելու միստիկական պատկերացումների հետ մեկտեղ հանդես է դալիս ողջ ժողովրդի մեղավորության գաղափարը և վերջինիս այակողմնային փրկության համար ո՛չ թե մարմինը մեռցնելու, այլ այն բարոյապես առողջացնելու կոչը[12]։ Նույն այդ մոտիվները ներթափանցում են և վարքագրության մեջ։ Սահակի և Մեսրոպի պատմությունում (XIII դ.) վարքագիրը նկարագրում է պետականությունը կորցրած հայ ժողովրդի դժնի վիճակը, որը «կործանված, սրբապղծված»՝ կատարված ոճիրների պատճառով, «կործանման է դատապարտված». խոսում է անօրինությունների, բարոյագրկության ահագնացման մասին և այլն, բայց միևնույն պահին մատնանշում է փրկության ուղին։ Նա ուղղակի ապաշխարանքի կոչ է անում. «Եւ արդ՝ լարթի՛ր, արդ ստրջացի՛ր, գոնէ զգաստացի՛ր, արի՛, կարդա՛ առ տէր Աստուած քո, աղաղակեա՛ առ նա ցաւագին անձամբ. աղաչեա՛ զերեսս նորա, պաղատեա՛ առ նա ասելով. Դարձ առ մեզ Աստուած փրկիչ մեր, և դարձո զսրտմրտութիւնս քո ի մէնջ. Աստուած դու դարձեալ կեցո զմեզ, և ժողովուրդ քո ուրախ լիցին և քեզ. ցոյց մեզ Տէր զողորմութիւնս և զփրկութիւն քո տուր մեզ։ Զարթո զզօրութիւն քո և եկ կեցուցանել զմեզ»[13]։

Շատ հետազոտողներ նկատել են, որ հենց սկզբից վարքագրության մեջ ուրվագծվում է երկու ուղղություն՝ ժողովրդական և հռետորական, որի արմատները թաղված են անտիկ արվեստում։ Առաջին ուղղությունը նախորոշված էր լայն խավերի համար, մոտիկ էր բանահյուսությանը և օգտվում էր բանավոր ստեղծագործությանը հատուկ հնարանքներից։ Նմանօրինակ վարքերում արտահայտչաեղանակները և ոճը պարզեցված են։ Երկրորդ ուղղության վարքերում՝ ուղղված բարձրաշխարհիկ ընթերցողներին, լայնորեն օգտագործվում էր հռետորական ոճը[14]։

Ինչպես հռետորական, այնպես էլ ժողովրդական ուղղության հարող վարքագրական երկերում նկատվում են գրականության աշխարհականացման որոշակի հետքեր։ Աշխարհիկ ոգու ներգործությամբ տեղի է ունենում ժողովրդական ուղղության պատկանող վարքագրական հուշարձանների որոշ «դեմոկրատացում». վերջիններս առատորեն հեղեղվում են ժողովրդական խոսվածքի տարրերով, ընդարձակվում է հերոսների սոցիալական շրջանակը՝ նշանավոր անհատների հետ սրբախոսական հերոս են դառնում հասարակ մարդիկ (Խոսրով Գանձակեցի, Հովսեփ Դվնեցի), օգտագործվում են աշխարհիկ, կենցաղային սյուժեներ և այլն։ Նկատելիորեն պարզեցվում և լայն տարածում են գտնում ինչպես վարքերի ժողովրդական պատումները, այնպես էլ նրանց գրական վերամշակումներն ու համառոտումները, որոնց վկայությունն են հայկական հայսմավուրքի խմբագրությունները։ Սրանք մեծ տարածում են ստանում մասնավորապես XIII դ.։ Ժողովրդական ուղղության վարքերում որոշակի զարդացում են ապրում հրաշապատումներն ու տեսիլքները։ Հրաշապատումների հեքիաթային տարրը (հիշենք Տրդատի խոզի կերպարանք ստանալը և Գրիգոր Լուսավորչի աղոթքի շնորհիվ վերստին մարդ դառնալը, թունավոր օձերի ու

12 Մ. Արեղյան, նշվ. աշխ., էջ 56։

13 «Սոփերք», հ. II, Վենետիկ, 1855, էջ 23—25։

14 Х. Лопарев, Греческие жития святых VIII—IX веков, стр. 6—7; С. Полякова, Византийские легенды, стр. 246—247; С. Аверинцев, Плутарх и античная биография, стр. 122.

կարիճների մեջ Գրիգոր Լուսավորչի անվնաս մնալը Խորվիրապում և այլն) իր տեղը դիջում է կենցաղային, առօրյա, սովորական դեպքերի նկարագրությանը[15]։

Հոետորական կամ ներբողական վարքերում հերոսի պատկերման պայմանականությունները, իբրև գեղարվեստական հնարանքներ, հաճախ տեղի են տալիս վերջիններիս մեջ առատորեն ներթափանցող ռեալիստական նկարագրությունների տարրերին։

Արտարին գործոններից բացի, նրանց հետ միահյուսված, XI—XV դդ. վարքագրական հուշարձանների վրա իր որոշակի կնիքն է դնում հենց վարքագրական ժանրի զարգացման միտումը։ Սկսած XI դ. այդ հուշարձաններն ստանում են վարքագրության ժանրի ձևավորման ավարտուն շրջանին բնորոշ գծեր։ Աչքի է ընկնում դրանց ժանրային ամբողջականությունը, առավել լիակատար և ցայտուն են դրսևորվում առանձնահատկությունները՝ կապված վարքերի խրատական կողմի խորացման հետ։

Վարքերի ուսուցողական նպատակադրումը ստիպում էր գտնել նոր արտահայտչամիջոցներ, որոնց օգնությամբ պետք է ընթերցողին հասցվեր ստեղծագործության հիմնական գաղափարը։

Ժողովրդական և հոետորական վարքերը տարբեր ճանապարհներով են մոտենում այդ խնդրի իրագործմանը։ Առաջինների մեջ խրատական գաղափարները արտահայտվում են հրաշապատումների ու տեսիլքների միջոցով, որոնք վեր են ածվում դրականորեն վերամշակված պատմությունների։ Այդ իրողությունը հեշտությամբ նկատելի է մի քանի խմբագրությամբ պահպանված վարքերում։ Վաղ խմբագրության հրաշքի հսկանցիկ հիշատակումը հետագայում փոխակերպվում է գրական մշակման ենթարկված պատմության։ Համեմատենք, օրինակ, Ստեփանոս Սյունեցու վարքի՝ Մովսես Կաղանկատվացու խմբագրությունը[16] Մխիթար Այրիվանեցու ուշ շրջանի խմբագրության հետ[17] կամ Գրիգոր Նարեկացու վարքը Ներսես Լամբրոնացու հեղինակությամբ՝[18] նրա հայսմավուրքային խմբագրությունների հետ[19]։

Հոետորական վարքերում, որոնց անդրադառնում ենք հանգամանորեն, ավելի նկատելի է հակումը դեպի լեզվա-ոճական պաճուճանքները, որոնք երբեմն միտումնավոր բնույթ են կրում (Գևորգ Սկևռացու վարքը)։ Իրենց բնույթով սրանք մոտենում են ներբողներին, լեզուն ու կառուցվածքը որոշակի փոփոխության են ենթարկվում։ Հաճախ ձևը իշխում է բովանդակությանը, բուն բովանդակության ծավալը ընդհանուր-վերացական դատողությունների, հերոսի կյանքի մասին հուզումնալից մտորումների համեմատությամբ բավական փոքրանում է[20]։ Շարադրանքի ընթացքը ընդհատում են հոետորական,

---

15 «Ագաթանգեղեայ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1914, էջ 71—72, 112։

16 «Մովսեսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի», Թիֆլիս, 1912, էջ 364—366։

17 Դ. Հովսեփյան, Մխիթար Այրիվանեցի, Նորահայտ արձանագրություններ և մատենագրությունը, Երուսաղեմ, 1931։

18 «Հանդես ամսօրյա», 1940, էջ 215—217։

19 «Հայսմաւուրք», Կ. Պոլիս, 1834, փետրվարի 27, նաև 1730, փետրվարի 27։

20 Դ. Լիխաչովը, օրինակ, նշում է, որ Ստեփան Պերմսկու վարքում փաստերը կարող էին տեղավորվել ստեղծագործության հիսուներորդ մասում, մնացածը՝ հուզումնալից մտորումներն

քնարական զեղումները, աղոթքներն ու ողբերը, որոնք ընդհանուր գործողությունը դանդաղեցնելով՝ ուժեղացնում են պատմվող դեպքերի ազդեցությունը, նրանց թողած տպավորությունը։ Ահա սա՛ է հռետորական վարքերի և ներբողների նմանությունը։ Սակայն, ի տարբերություն առաջինների, վերջիններում այս գծերը շատ ավելի շեշտված բնույթ են կրում։ Ձևը, գրեթե միշտ, գերիշխում է բովանդակությանը, հուզական շարադրանքը, տարբեր տեսակի զեղումները հաճախ առաջացնում են ժամանակագրական հետևողականության խախտում և այլն։ Այդպիսի շարադրանքի և կառուցվածքի բնորոշ օրինակ կարող է ծառայել Սահակի և Մաշտոցի պատմությունը[21], որը ներբող է՝ նվիրված հայոց գրերի ստեղծմանը և առաջին հայ թարգմանիչների գործունեությանը։ Հեղինակը նպատակ չունի դրանք մանրամասնորեն նկարագրել։ Նա ձգտում է հանրագումարի բերել և գնահատել հայ ժողովրդի հոգևոր կյանքում գրերի ունեցած հսկայական գերը, բացահայտել հայերեն գիր ու գրականություն ստեղծողների սխրանքի վեհությունը և այն ի ցույց դնել մշակույթի ու գիտության իր ժամանակի ջատագովներին։ Հեղինակը հատվածաբար է օգտագործում սկզբնաղբյուրները՝ ներհյուսելով դրանք ընդհանուր շարադրանքին։ Աղբյուրներ ընտրելիս նա հին հեղինակների գրվածքներում փնտրում է այնպիսի հատվածներ, որոնք որոշակի պատմական տեղեկություններ են պարունակում Սահակ Պարթևի գործունեության, Մաշտոցի կողմից հայ գրերի ստեղծման և առաջին թարգմանիչների վերաբերյալ։ Սակայն դա չէ, որ գրավում է ընթերցողին. նրա միտքն ու զգացմունքները ամբողջովին համակվում են հեղինակի և նրա հերոսների ապրումներով։ Հուզական մթնոլորտի լիակատար միասնությունը ստեղծում է մեկ տրամադրությամբ համակված ամբողջական ստեղծագործության տպավորություն՝ չնայած խառն կառուցվածքին։ Այդ նպատակի իրագործմանն է ծառայում շարադրանքի հուզական երանգավորումը, բոլոր իրադարձությունների զգացմունքային գնահատումը։

XI—XV դդ. ներբողական կամ հռետորական վարքերի կառուցվածքին բնորոշ են ընդարձակ նախաբանները, երբեմն նաև խրատական վերջաբանները[22]։ Իրենց առջև դրված խնդրի իրագործման առիթով հեղինակների ապրումներն այս ժամանակաշրջանի վարքագրական հուշարձանների նախաբաններում միտումնավոր չափազանցված բնույթ ունեն։ Սեփական մեղապարտության մասին վարքագիրների հռետորական ինքնանվաստացուցիչ դատողու-

---

են սրբի կյանքի մասին (Д. Лихачев. Человек в литературе древней Руси, стр. 75)։ Վարքագրության զարգացած ջրջանի բնորոշ գծերի մասին տե՛ս նաև С. Полякова, նշվ. աշխ., էջ 265—268 և հաջորդները։

21 Մեզ են հասել Սահակի և Մաշտոցի Պատմության երկու խմբագրություն, մեկը՝ համառոտ («Սոփերք», հ. II, Վենետիկ, 1853, էջ 4—42), մյուսը ընդարձակ («Բանբեր Մատենադարանի», № 7, Երևան, 1964, էջ 366—398)։ Փ. Անթարյանն իրավացիորեն նշում է, որ այս ստեղծագործությունը պատկանում է Վարդան Արևելցու գրչին (նույն տեղում, էջ 365—376, նույնի՝ «Սահակ Պարթևի «վարքի» և նրա հեղինակի մասին», «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 2)։ Պատմության ժամանակի և հեղինակի հարցի մասին տե՛ս նաև՝ Հ. Աճառյան, Հայոց գրերը, Երևան, 1968, էջ 44—49, Խ. Թորոսյան, Սահակ Պարթևի վարքը և նրա հեղինակը («Բանբեր Երևանի համալսարանի», 1967, № 2, էջ 201—211)։

22 «Ներսես Շնորհալու վարքը» («Սոփերք», հ. XIV, էջ 8—10), «Գևորգ Սկևռացու վարքը» («Բանբեր Մատենադարանի», № 7, էջ 410—433), հմմտ. նաև Գրիգոր Սկևռացու ներբողը նվիրված Ներսես Լամբրոնացուն («Սոփերք», հ. XV, 1854, էջ 7—8)։

գլուխները՝ արտահայտված վերամբարձ ոճով, հերոսի կյանքը պատշաճորեն ներկայացնելու անկարողության առթիվ խոսքերը ընթերցողի մեջ պետք է նրա կյանքի նշանակալիության տպավորություն ստեղծեին։ XIV—XV դդ. ռուս վարքագրության առնչությամբ Դ. Ս. Լիխաչովը նկատում է, որ «հեղինակի կողմից սնփական տգիտությունը խոստովանելը նախորդ ժամանակաշրջանի գրական ստեղծագործությունների ընդհանուր գիծն է, սակայն XIV—XV դդ. այդ խոստովանությունը վանականի համեստության արտահայտություն լինելուց վեր է ածվում գրական բեույթի դեկլարացիայի. այն ցույց է տալիս բառեր փնտրելիս նրա ունեցած տատանումները, նկարագրվող անձնավորության սրբությունը համարժեք կերպով արտացոլելու ձգտումը...»[23]։ Նույն երևույթը նկատելի է նաև XII—XIV դդ. հայ հռետորական վարքերում։ Այդ զարդացումը ցուցադրելու համար Կորյունի «Վարք Մաշտոցի» նախաբանը համեմատենք մեզ հետաքրքրող շրջանի առավել բնորոշ հուշարձաններից մեկի՝ Գևորգ Սկևռացու վարքի հետ։ Եթե վերջինիս հեղինակը շարադրանքն սկսում է առաջիկա աշխատանքի հետ կապված իր ապրումների հուզումնալից, երկարաշունչ նկարագրությամբ, ապա Կորյունն այդ առիթով մի քանի բառ է գրում, որոնք Մաշտոցի կրտսեր աշակերտի շուրթերին հնչում են միանգամայն բնական և սոսկ ընդգծում են նրա համեստությունը. «Ուստի և իմ մասնաւոր աշակերտութեան վիճակ առեալ, թեպէտ և էի կրտսերագոյն, և առաւել քան զկար մեր, գրաւեալ անաչառ հրամանին հասելոյ, փութանակի և առանց յապաղելոյ զառաջի եդեալն մատենագրել»[24]։

Մինչդեռ Գևորգ Սկևռացու Վարքում կարդում ենք. «Որովք մտաւք եղկելիս ես համարձակիմ ձառս ճշմարիտս նկարել զառնէն աստուծոյ՝ զսրբոյն Գէորգեայ, որոյ յիշատակն և հրեշտակաց ախորժելի է, զի հանգէտ նոցին և որպէս զնոսին քաղաքավարէր ի մարմնի, յորոյ անսայթաք վարուցն սասանեցան մարմին եղեալքն, զի ամենայնիւ յինքն կրէր զհոգին սուրբ։ Եւ մարգարէն ասէ՝ Մի մնասցէ հոգի իմ ի մարդիկդ յայդ, վասն լինելոյ դոցա մարմին։ Հապա վասնզի երկիւղ սարսռալի պաշարէ յամենայն կողմանց զիմս անձն և զդողումն ունի զոսկերս իմ, զի կապուտ և կողոպուտ արար զիս հասարակաց թշնամին. և թէ զինչ գործեցից՝ ոչ դիտեմ։ Զի սկիզբն առնել ի չքնաղ և երկնահանգէտ վարս սրբոյն, որպէս հրաման ընկալայ, զարհուրիմ, մի գուցէ դատապարտեցայց, քանզի և արժան իսկ եմ։ Եւ դարձեալ, անփոյթ առնել զարեգակնափայլ գնացից հանդիսի առն սքանչելւոյ երկնչիմ և զդողանի հարեալ եմ, եթէ զծրարողին ի վարշամակ ծուլութեան զտէրունեանն դրամ առից զպատիժ եւ կամ զանհնազանդին հրամանաց ըստ Սողոմոնի ժառանգեմ զկորուստն ...Եւ իմ զայս և զսոցին նմանսն ածեալ զմտաւ, մոռացայ թէ զի՞նչ ոք եմ և կամ ո՞ւր ձեռնարկեմ»[25]։

Արտակարգ հարուստ են այս ժամանակաշրջանի հռետորական վարքերի արտահայտչամիջոցները։ Երբեմն թվում է, թե վարքագրին ավելի շատ հետաքրքրում է հնչյունային կողմը, նրա խոսքը դառնում է երկարաշունչ, հոմա-

---

23 Д. Лихачев. Культура Руси времени Андрея Рублева и Епифания Премудрого, стр. 59 (ընդգծումը մերն է—Ռ. Տ.-Դ.)։

24 Կորյուն, Վարք Մաշտոցի, հրատ. ի ձեռն Մանուկ Արեղյանի, Երևան, 1941, էջ 22։

25 «Բանբեր Մատենադարանի», № 7, էջ 411։

նիշներով բացառիկ հարուստ, բազմակրկնող[26]։ Շարադրանքը հաճախ վեր է ածվում զգացմունքների բանաստեղծական արտահայտության, չափածո արձակի։ Ներքին ռիթմը, երաժշտականությունը և բանաստեղծականությունը խիստ բնորոշ են այդ ժամանակաշրջանի հայ վարքագրության այնպիսի ուշագրավ հուշարձանների, ինչպիսիք են Ներսես Շնորհալու վարքը, Ներսես Լամբրոնացուն նվիրված ներբողը, Սահակի և Մաշտոցի պատմությունը, Գևորգ Սկևռացու վարքը։ Սրանք են այս ժանրի զարգացած շրջանի ընդհանուր հատկանիշները։

Հայ վարքագրությունն ուներ և այլ առանձնահատկություններ, որոնք յուրահատուկ կնիք են դրել նրա հուշարձանների վրա։ Վերջիններս աչքի են ընկնում պատմական հարուստ բովանդակությամբ։ Սերտորեն կապված լինելով քաղաքական, մշակութային և առհասարակ, հոգևոր կյանքի հետ, նրանք անմիջականորեն արձագանքել են երկրի պատմական ճակատագրի համար կարևոր նշանակություն ունեցող իրադարձություններին[27]։ Հայկական վարքերի հերոսները, առանց բացառության, պատմական գործիչներ են, իսկ վարքագիրների մեծ մասը՝ նրանց ժամանակակիցները կամ կրտսեր ժամանակակիցները։ Սրանով պետք է բացատրել վերացական ոճի և իրադարձությունների փաստացի նկարագրության ու շարադրանքի պատմականության այն զարմանալի զուգակցումը, որը դրսևորվում է XII—XIV դդ. վարքերում։ Այսպես, այդ ժամանակաշրջանի հայ վարքագրության լավագույն հուշարձաններից մեկում, Ներսես Շնորհալու վարքում, վերացարկման ձգտումը արտահայտվել է միայն ընդարձակ առաջաբանում, բանաստեղծորեն արտահայտիչ լեզվի մեջ, մինչդեռ բուն վարքը գրված է իրենց բովանդակության հարստությամբ աչքի ընկնող հնագույն վարքերի լավագույն ավանդույթների ոգով։ Հեղինակը երբեք չի կորցնում չափի զգացումը։ Շարադրանքն անկաշկանդ է, տրամաբանական, ժամանակագրորեն հետևողական, առանց անհարկի հռետորականության և խրթին ու այլաբանական համեմատությունների։ Լեզուն աչքի է ընկնում ընտիր նրբագեղությամբ։ Վարքագրի հռետորական պերճախոսությունը ինքնանպատակ չէ, այլ բնականոն ներհյուսվում է նրա խոսքին՝ ընթերցողին երբեք չշեղելով վերացական դատողություններով։ Զգացվում է, որ տվյալ վարքագրական երկը ծանրակշիռ է, պատմականորեն հավաստի և միտում չունի արհեստականորեն «տրամադրություն» առաջացնելու։ Ընդհակառակը, հեղինակը երբեմն պատմության մեջ հետաքրքրաշարժ տարրեր է մտցնում, որոնք շարադրանքին վիպագրական բնույթի հատկանիշ են հաղորդում։ Այսպես, օրինակ, հելլենիստական շրջանի արկածային վեպերի և բյուզանդական լեգենդների ոգով պատմում է Գրիգոր Վկայասերի և նրա ուղեկիցների՝ Կոստանդնուպոլսից Պաղեստին ճանապարհվելը և փոթորկի պատճառով Եգիպտոս ընկնելը։

Հարուստ բովանդակությամբ է աչքի ընկնում Գևորգ Սկևռացու վարքը, որը ոչ միայն Սկևռացու կյանքի և գործունեության կարևոր սկզբնաղբյուր է,

---

26 Հայ գրականության մեջ բազմակրկնող ոճը, ըստ Հ. Աճառյանի, սկսել է տարածվել X դ. («Հայոց գրերը», էջ 47)։

27 V—XV դդ. վարքերի մասին մանրամասն տես՝ „Памятники армянской агиографии", перевод с древнеармянского, вступительные статьи и примечания К. С. Тер-Давтян. Ереван. 1973. стр. 14—25:

այլև հետաքրքիր տեղեկություններ է պարունակում Կիլիկյան Հայաստանի XIII դ. վերջի—XIV դ. սկզբի պատմության և հատկապես եկեղեցական-քաղաքական ներքին պայքարի վերաբերյալ[28]։ Այդ երկում ցայտունորեն արտահայտվել է վերացական ոճի և փաստացի, պատմական շարադրանքի զուգակցումը։ Թվում է, թե հեղինակը արժանին է հատուցում և՛ ժամանակի ոճին, և՛, միաժամանակ, պատմական շարադրանքին, քանի որ Գևորգ Սկևռացու-ժամանակակիցն ու համախոհն է։ Ինչ-որ ներքին սահմանազատում է զգացվում այնտեղ, ուր վերացական լեզուն ու ոճը պարզորոշ փոխվում են հեղինակին հուզող իրադարձությունների կոնկրետ նկարագրության։ Վերացական ոճով է գրված վարքի առաջին մասը, որ նվիրված է հերոսի ծնունդին, կրթությանը և մեծագործությանը։ Մինչև անգամ կարելի է խոսել «հերոսի թեմայի» առկայության մասին։ Հերոսին նվիրված խոսքը միշտ էլ ուղեկցվում է հռետորականությամբ, այլաբանական խրթին համեմատություններով, որոնք վեր են ածվում ռիթմական արձակի։

Հերոսի մասին խոսելիս՝ վարքագրի լեզուն միշտ վերամբարձ է, ռիթմիկ («Սա էր, որ ի ցոյց մարդկան ոչինչ խորհէր կամ գործէր։ Սա էր, որ իբր լոյս, յաշտանակ և քաղաք ի լերին՝ զիւրաքանչիւր պիտոյսն բաշխէր։ Սա էր աղաւնին, որոյ թևքն արծաթապատ ի բանից տեառն, ընտիր և թիկնամէջն ի գոյն ոսկւոյ»[29]), հաճախ դառնում է բանաստեղծորեն պատկերավոր («Եւ նա կայր իբրև զառեւծ յանձնապաստան՝ ի մէջ նապատակացն, որ սասանէին։ Եւ աղուեսքն նենգաւորք, զառեւծն՝ որ սնեալ էր յանապատին շնորհիւն աստուծոյ, սպանանել ոչ զարէին։ Եւ չղջիկանքն խաւարասէրք, զարծիւն երկընթաց յիւրեանց նսեմ բանսն իջուցանել ոչ մարթէին։ Եւ գայլքն գիշակերք, զտիրասէր շունն ի մէջ չարութեան մագլացն զազատն ծախել ոչ ժամանէին։ Զի պահեաց խնամք բարերարին զանբիծ աղաւնին, և չոր խիզախաւղ բազէիւքն ոչ ըմբռնեցին»)[30]։

Եթե դրական հերոսի գործի արդարությունը ապացուցելու համար հեղինակը օգտագործում է երկարաշունչ, վերացական դատողություններ, որոնք անհրաժեշտ են նրան իդեալականացնելու համար, ապա բացասական հերոսներին դատապարտելիս հաճույքով դիմում է նրանց չարագործությունների կոնկրետ նկարագրությանը, քանի որ ինչքան շատ չարագործություններ նկարագրվեն, այնքան ավելի մեծ պարսավանքի կարժանանան բացասական անձինք։ Այս ներքին տրամաբանությամբ է բացատրվում այն փաստը, որ վարքի երկրորդ, հիմնական մասում, որտեղ նկարագրվում են ունիթոռների անօրենությունները, նրանց դեմ Գևորգ Սկևռացու մղած պայքարը և, հատկապես, երբ խոսք է գնում «աստծու պատուհասի» մասին, որին ենթարկվելու են հավատի «հայհոյիչները», հռետորական ոճը ետին պլան է մղվում, իսկ վերջում բոլորովին անհետանում է, իր տեղը զիջելով փաստացի, պատմական շարադրանքին։ Վարքագիրը հետևողականորեն, առանց հռետորական շեղումների պատմում է լատինասիրության ծագման՝ ու հետագա տարածման մասին՝ անդ-

28 «Գևորգ Սկևռացու վարքը», հրատարակության պատրաստեց է. Բաղդասարյանը («Բանբեր Մատենադարանի», № 7, էջ 399—410), նաև՝ «Памятники армянской агиографии», էջ 102—107։

29 Նույն տեղում, էջ 420։

30 Նույն տեղում, էջ 427։

բաղառնալով Վահրամ Բարունու, Հեթում II, Գրիգոր Անավարզեցու դերին։ Այդ առումով ուշադրավ են այն էջերը, որոնք նվիրված են Աստվածածնի վերափոխման տոնին (երբ նրանք «այսր անդր զասպատակ շարաշշուկ գարհուրմանցն սփոէին...»)[31] և «Ծառաստկի» նկարագրությանը (երբ «ի ճենճերս ձիթոյ և ձկան և յարբեցութիւն գինւոյ և ի խաղս դայլայլկաց զապաշխարութեան աւուրս անցուցանէին»[32]։

Երկի ուսուցողական, խրատական հնչեղության առումով կարևոր նշանակություն ունի եզրափակիչ մասը, որտեղ հեղինակը մի քանի էջ նվիրում է «ճշմարիտ հավատից շեղվածներին» հասած «աստծու պատուհասի» նկարագրությանը։ Սակայն «աստծու պատուհասի» պատրվակով նա մանրամասնորեն նկարագրում է միության հակառակորդների դեմ հարուցված հալածանքները, քանի որ վերջիններիս խլրտումներն այնպիսի չափերի էին հասել, որ Օշինը հարկադրված էր նրանց դեմ զորք դուրս բերել. «Եւ զաւրաւք ըմբռնեաց զորս և պատահեաց, և զյոլովս եսպան, և զայլս ետ կախել ի դրունս քաղաքաց և ի ճանապարհս ի մէջ դաշտաց։ Եւ զոմանս ի ձիս ամենիս, որ անկիրթ էին սանձուց, յագինս ետ կապել և ընդ դաշտս և ընդ լերինս ցիր և ցան զսուրբ մարմինսն մաշեցին»[33]։

Մի այլ դեպքում նա բացահայտում է հակառակորդ խմբավորման բարձրաստիճան հոգևորականների գաղտնի գործարքները։ Վարքից ընթերցողն իմանում է, որ բարձրաստիճան հոգևորականությունը բարոյական անկում ու քայքայում էր ապրում։ Գրիգոր Անավարզեցու հաջորդ Կոստանդինի մասին նա գրում է. «Եւ զհայրապետն՝ զոր յետ շարախրատին յաւուրս Հեթմոյ եդին՝ արծաթով ընտրեցին. և գիտեալն ի տեառնէ յաթոռն ազնիւ նստուցին, որոյ անուն Կոստանդին ձայնէին, որ անբան էր որպէս ձուկն և անարժան որպէս զորտ, բայց երկոտասան հազարաւ սրբեցաւ և շաւ յանձնառութեամբն արժանաւորեցաւ»[34]։

Այսպիսով, XI—XV դդ. հռետորական վարքերի էական առանձնահատկություններից մեկն էլ վերացական ոճի և փաստացի շարադրանքի զուգորդումն է։

Սակայն այդ ժամանակների հռետորական վարքերի մեջ ամենանշանակալիցը և հայ վարքագրության համար նորն այն էր, որ հերոսների անհատականացման բավական հաջող փորձեր էին արվում[35]. դեռ ավելին, հանդիպում են հերոսների պատկերման ռեալիստական, օբյեկտիվ տարրեր ի հակադրություն ավանդական ուղղագիծ պատկերման։ Այս երևույթն ըստ արժանվույն գնահատելու համար հիշենք, որ վարքերի եկեղեցական-ծիսական դերը պահանջում էր ջնջել-վերացնել հերոսի բոլոր անհատական գծերը, մոտեցնել նրան «ժամանակի իդեալին»[36]։ «Միայն «ժամանակավորից», «մասնավորից»

31 Նույն տեղում։

32 Նույն տեղում, էջ 428։

33 Նույն տեղում, էջ 431—432։

34 Նույն տեղում, էջ 431։

35 Անհատականացման մասնակի փորձերի մենք հանդիպում ենք դեռևս V դարում։ Д. Лихачев, նշվ. աշխ., стр. 72—74, М. Авдалбегян. Становление армянской художественной прозы (Автореферат диссертации на соискание ученой степени доктора филологических наук, Ереван, 1972, стр. 13):

36 Д. Лихачев. նշվ. աշխ., էջ 109։

և «պատահականից» ազատագրված մարգը կարող էր դառնալ վարքագրական երկի հերոս՝ բարու կամ չարի, «բարության» կամ «չարության» ընդհանրացված մարմնացում։ Գործնականորեն գա հանգեցրեց, և չէր կարող չհանդեցնել այն բանին, որ հերոսներն սկսեցին հիշեցնել մեկը մյուսին. ունեին «բնավորության» միևնույն գծերը, նման իրադրության մեջ վարվում էին միանման, արտասանում էին միևնույն բառերը...»[37]։ Դեռևս վարքագրության, որպես ժանրի, ձևավորման արշալույսին Բարսեղ Կեսարացին, գրելով այն մասին, թե ինչպիսին պետք է լինեն վարքերի հերոսները, համեմատում էր նրանց «շարժվող և գործող արձանների հետ»[38]։ Մի խոսքով, վարքագրական կանոններով պահանջվում էր ստեղծել դրական կամ բացասական պայմանական հերոս՝ ըստ որոշակի կաղապարի։ Այստեղից էլ՝ վարքագրական հերոսների պայմանականությունն ու կայունությունը։ Դրական հերոսը չէր ունենում ո՛չ մի բացասական գիծ, իսկ բացասականը առավել ևս չէր կարող որևէ դրական հատկություն ունենալ։

Այս տեսակետից Ներսես Շնորհալու և Գևորգ Սկևռացու վարքերում նկատելի են որոշակի շեղումներ ժանրի յուրահատկություններից բխող պայմանականությունից։ Դրական հերոսները, թեև «բարու մարմնացում» են, սակայն ունեն իրենց անհատական բնավորությունը, իրենց սովորություններն ու հակումները, որոնց շնորհիվ ավելի լիարյուն են և կենդանի։ Դա վերաբերվում է հատկապես Ներսես Շնորհալուն, որը վարքում ամենևին էլ վերացական կերպար չէ։ Ընդհանուր քրիստոնեական առաքինություններից բացի, որոնցով օժտում է վարքագիրն իր հերոսին, նա ունի նաև բնավորության անձնական գծեր և հատկություններ, այդ պատճառով էլ ընթերցողին պատկերվում է բարձրաշխարհիկ դաստիարակություն ստացած, մեղմ մարդու մի կերպար։ Ահա՛ թե ինչպես է նկարագրում նրան վարքագիրը. «Ո՛չ ումեք ի մանկանց զանկատար ձայնեաց զանուն, զոր ամենայն ազգք մարդկան սովորաբար ունի, և ո՛չ ումեք մականուն ասաց»։ Այլ «լոյս վերաձայնէր ամենեցունց անուն մեծի և փոքրու... և եթէ լինէր ի պատճառէ իմեմնէ բան և կամ գործ յումեքէ արժանի բարկութեան, նա և ոչ սրտնէր կամ ցուցանէր բարկութիւն ինչ, այլ հեզ և քաղցրագոյն բանիւ ասէր. Լոյս, եթէ ոչ յիս խնայէի՝ բարկանայի քեզ»[39]։

Ուշագրավ է, որ Ներսես Շնորհալու գրական ստեղծագործության և նրա սովորությունների մասին խոսելիս վարքագիրը նկարագրությունից անցնում է պատկերավորման և ստեղծում դրական գործունեությամբ զբաղվող Ներսես Շնորհալու տեսանելի կերպարը, որ նույնպես կապված է գեղարվեստական նոր հայեցողության հետ. «Եւ արդ թէպէտ և ունէր զգիտութիւնն ի կրթութենէ վարժմանն, ուստի և յայտ յայտմանէ էր, զի յարաժամ մելան և քարտէս պատրաստական լինէր մերձ նմա առ ի գրել, և նա անպարապորդ միշտ մատեան ի ձեռս ունելով ընթեռնոյր և որոնէր և քննէր անդադար զխորին միտս գրոց նուրբ տեսութեամբ, և ի կարի երկարագոյն աշխատութեանցն, թե պատահէր փոքր մի յարիլ ի բազմոցի և սակաւ ինչ նիրհմամբ հանգչել, շրթունք նորա իբրեւ ի յարթնութեան շարժէին և խաղային թելադրութեամբ Հոգւոյն սրբոյ։ Որոյ զկնի իբրեւ ի խթանէ ումեքէ զարթնոյր և առեալ փութապէս զպատրաստական բար-

37 И. П. Еремин, նշվ. աշխ., էջ 118։

38 «Христианские чтения на 1827 г.», ч. XXV. СПб. 1833, стр. 179.

39 «Սոփերք», հ. XIV, էջ 42—43, 44։

տէսն գրեր արագ արագ, զոր ի տեսլեանն առեալ լինէր ի Հոգւոյն սրբոյ, և դարձեալ ննջեր. և նոյնպէս լինէր այս առ նմա հանապազ»[40]։

Հետաքրքրական են այն բնութագրերը, որ Գևորգ Սկևռացու վարքի հեղինակը տալիս է Վահրամ Բաբունուն, Հեթումին, Գրիգոր Անավարզեցուն— այն մարդկանց, որոնք պատկանում են հակամարտ խմբակցությանը։ Միջնադարյան հայտնի փիլիսոփա, «քաղկեդոնական հերետիկոսության» կողմնակից Վահրամ Բաբունին բնորոշվում է որպես «բանիբուն ճարտասան աներկեւղ, միանգամայն անամաւթ և քաջաբան»[41], իսկ Գրիգոր Անավարզեցին, ժամանակի հայ կաթողիկոսը, լատինասեր շարժման ղեկավարը՝ «քաջ դիտնական և կատարեալ տելէտ»[42]։ Առանձնապես հետաքրքիր է Հեթում թագավորի բնութագրությունը, որը նույնպես հակամարտ խմբակցության կողմնակից է. «Բայց քանի շատախաւս էր և սիրէր ի կաղ և ի կռիւ պահել միշտ՝ զորս ընդ ձեռամբ ունէր։ Ե։ տեղեակ ևս էր գրոց և միշտ ջանայր զինքն ճշմարիտ ցուցանել և յորժամ պատահէր մարդոյ, զի անծանաւթ լինէր բանի, ի հարց և ի փորձ մտեալ՝ չարչարէր, և զոր թաքնաբար ունէր զկայծակն խռովարար յայտնէր, բայց ի սրբոյս երկնչէր, այլ սակայն ընդ ծաղր խառնեալ ցուցանէր և որպէս յաւտար ի դէմս՝ ընդ սրբոյս պայքարէր»[43]։ Այս բնութագրությունն արդեն շատ է հեռացել վարքագրության կանոնների պայմանականություններից, բացասական հերոսին խիստ մռայլ, կոպիտ գույներով ներկայացնելուց։ Ընթերցողի առաջ պատկերանում է մի մարդ, որն առիթը բաց չի թողնում ի ցույց դնելու իր դիտելիքները, որը, միաժամանակ, բավականաչափ ճկուն է և անհրաժեշտության դեպքում կարող է կատակի տալով դժվար վիճակից ազատվել կամ պայքարել «որպէս յաւտար ի դէմս»։ Այստեղ արդեն առկա են նրա բնավորության որոշակի գծերը։

Գևորգ Սկևռացու բնութագրության մեջ խոսվում է նրա արտաքինի մասին, մի բան, որ վարքագրական հուշարձաններում խիստ սակավ է հանդիպում, քանի որ, ըստ վարքագրական պատկերացումների, մարդու մեջ արժեքավորը նրա ներքին գեղեցկությունն է։ Ահա՛ թե ինչպես է պատկերում հեղինակը Գևորգ Սկևռացուն. «Եւ զի ահարկու էին երեսք սրբոյն և սարսափելի տեսիլ քաղցր ոգւոյն, վասն զի անաչառ և անկաշառ էին բանք ուղիղ բերանոյն. անձն դիմաւոր, տեսիլն շնորհաւոր, բանն չափաւոր, զաւրութիւնն երկնաւոր, հասակն զարմանաւոր, լեզուն ճահաւոր, միտքն լուսաւոր, զի սակաւ լսէր և շատ իմանայր։ Նոյնպես սուղ ինչ խաւսէր և յոլով լոյս փայլատակէր»[44]։ Այստեղ թեև որոշ մակդիրներ ընդհանուր կարգի են, բայց և այնպես ստեղծվել է որոշակի կերպար։ Հեղինակը պատկերել է մի անկաշառ գիտնական վարդապետի, որը պատրաստ է մեռնել հանուն իր գաղափարների։

Այսպիսով, հայ վարքագրության զարգացման հիշյալ շրջանի (XI—XV դդ.) գրական վարքերի ընդհանուր գնահատականը տալիս պետք է նշել, որ հայ իրականության մեջ այդ շրջանը ուներ ինքնատիպ գծեր՝ գրական հուշարձաններում վերացականացման ուժեղացումը զուգորդվում էր փաստացի,

---

40 Նույն տեղում, էջ 42։

41 «Բանբեր Մատենադարանի», № 7, էջ 421։

42 Նույն տեղում։

43 Նույն տեղում, էջ 421։

44 Նույն տեղում, էջ 417։

պատմական շարադրանքի հետ։ Վարքագիրները նշանակալի հաջողություններին են հասել մարդկային կերպարներ ստեղծելու ասպարեզում։

XI—XV դդ. հռետորական վարքերն, ասես, մի սահմանագիծ են, երբ իր բարձրագույն վերացական բնույթին է հասնում վարքագրությունը, բայց և միաժամանակ նրա ընդերքում զարգանում են գեղարվեստական մտածողության նոր տարրեր։

ХУДОЖЕСТВЕННАЯ ЦЕННОСТЬ АРМЯНСКИХ ЖИТИЙ (XI—XV вв.)

К. С. ТЕР-ДАВТЯН

Резюме

В армянской литературоведческой науке агиография является наименее изученной областью, хотя на протяжении целого тысячелетия она была одной из составных частей армянской средневековой литературы.

XI—XV вв. являются качественно новым этапом в развитии армянской агиографии, этапом окончательного завершения эволюции агиографии как жанра.

На характер и облик житийных памятников этого периода определенную печать наложили, с одной стороны, общий литературный подъем, с другой—внутренняя тенденция развития агиографии.

Новые веяния, мировоззрение, новые художественные вкусы проникали также в житийную литературу. Сочетание этих моментов с внутренней тенденцией развития житийного жанра определили самобытность и ценность армянских риторических житий.

Риторические жития XI—XV вв. являются как бы рубежом, где, с одной стороны, своего наивысшего абстрагирующего характера достигает армянская агиография, с другой—зарождаются элементы нового художественного метода.